

# ԾՈՎՔԸ ԵՒ ԻՐ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌԸ

ԱՆՈՒՆ ԶԵՆՈՒԳԻՐՆԵՐՈՒՍ ԲԱՌԱԿԱՆ ՅՈՒՅԱԿԸ

1927ին, երբ Ծովը - Կեօթիկի անուն անդրա- նիկ գործս հրատարակեցի Մարտէյլի մէջ, չա- տերու կարգին, Գեր. Հ. Ս. Երեմեան եւս զիս գնահատող ու քաջալերող գեղեցիկ գրախօսա- կան մը ստորագրեց Պոսթոնի Հայրենիք օրա- թերթին նոյն տարուան Օգոստ. 12 թիւին մէջ:

Ազգաշունչ գրագէտ Հայրը, իր ինչ շնորհած գրախօսականով վեր առած էր յիշեալ գրքիս մէջ գրուած կարգ մը տեղական բառեր իրենց բացատրութեամբ և աւելցուցած էր:

«Այս բառերէն կարելի է հետեւցնել որ Ծով- քի գաւառաբարբառը տակաւին անմշակ լեզ- ուական գանձարան մըն է: Ուր է թէ հեղինակը աւելի լայն տեղ տուած ըլլար ասոր»:

Միեւնոյն տարուան Բազմալիկայի Օգոստ-Սեպտեմբեր միացեալ համարին մէջ, Գեր. Հ. Ե. Փէշեկեան Ծովը - Կեօթիկիս մէջ յիշուած ծո- վեցներու ընտանեկան, ընկերային, ազգային և կրօնական պատմութիւններն ու սովորու- թիւնները ուշագրութեան առնելով գրած էր:

«Անշուշտ ստիպող շարժառիթ մը անապա- րել տուած է հրատարակել Ա. մասը, որ աւելի խոր ու հմտալից ուսումնասիրութեան մը կա- րօտ էր, և ասոր համար է որ հեղինակն ալ գիտակից կը խոստանայ սպագային «բազմա- կողմանի» աշխատութեան մը ձեռնարկել, ներ- կայ գրքիս Ա. մասին վերաբերեալ քննական գործ մը լոյս ընծայելու համար (էջ 104):

Ինչպէս Հ. Ս. Երեմեան և Բազմալիկայի այժ- մի Գեր. Խմբագիրը նկատի առած էին, ճիշդ է որ Ծովքի մասին առանձին ու ամբողջական գիրք մը քննական աշխատանքով պատրաստե- լու և հրատարակելու միտքը շատոնց արթն- ցած էր իմ մէջ, և որ հեազհետէ զօրացաւ կարգալով Գ. Եպիսկ. Սրբանձատեանցի Թու- րուս Աղբարը, Հ. Ղ. Աւիշանի Ներսէս Ենոք- հայի և Պարագայ խորը, Բ. Վարդ. Կիւլէսե- րեանի Ծովը - Տրոսը և Հետմ կրայն և ուրիշ կարգ մը գործեր, որոնք ուղղակի կամ ան- ուղղակի կապ ունէին Ծովքին ու անոր պատ- մութեան:

Այս իսկ հիմամբ, ես սկսած եմ տարիներէ ի վեր գրել առնել նիւթին հետ առնչութիւն ունեցող պատմութիւններ, սովորութիւններ, ասացուածքներ և բառեր:

Այս ամէնը գաւառներէ, և Ծովքն ու իր Գաւառաբարբառը խորագրի տակ առանձին հա- տորով մէջտեղ բերելու պատեհութիւնը պիտի ունենամ: Չեմ գիտեր: Յոյսս զօրաւոր է, բայց մինչեւ հիմա ապրած կեանքս, այդ պարագային

ու միջոցին հասնելու վկայութիւն մը չտուաւ գեռ գժբախտաբար:

Թերեւս օր մը կարենամ. մինչ այդ սակայն, լաւ կը համարիմ յիշեալ ձեռագրիս 600ի մօտ բառացանկէն քաղուածք մը տալ Բազմալիկայի պատ. էջերուն, անոնց ստուգաբանութիւնը թողելով մասնագէտներուն:

1. Միջ. — Ծովք լճի եղերքներուն, ալիքներէն հոս ու հոն տարուող մանր աւազներ, որոնք կը տարբերին հին ու մեծ ծովերու աւազներէն: Երբ հովը հակառակ կողմէն զօրանար, և խուռ- տորսին կողերը միջ բերէին ալիքները, ծովե- ցիք կ'ըսէին այդ կողերուն համար թէ միջ է (տես Ծովք - Կէօթիկ, էջ 90):

Եթէ միջը կողերուն վրայ մեծ քանակու- թեամբ արշաւէր ու հնարաւոր չըլլար զայն մաքրել, և վերստին խիճերով կամ խժիքե- րով շէնցնել կողերուն մէջերն ու առջեւները, որսորդը կը թողնէր այդտեղ և կ'երթար ուրիշ յարմար տեղ մը նոր կողեր շինելու: Որովհե- տեւ խուռտը միջին չի մօտենար բնաւ:

2. Աղատ. — Խուռտին կողերը մանր աւազ- ներու կամ ըստ ծովեցիներու միջի արշաւէն պաշտպանող փայտերէ և ճիւղերէ հիւսուած պարիսպ, պատնէշ:

3. Խժիք. — Ծովեցիները, խուռտ որսալու իրենց կողերուն յատակը և չորս կողմերը, կը ծածկէին խիճերով: Ու այն տեղերուն ուր յարմար խիճեր չգտնուէին, կամ չբաւէր, որսորդը մօտակայ գիւրաբէկ ժայռէն մաս մը կը փշրէր, ըստ ծովեցիներուն խժիք կը քակէր ու զայն կը տանէր իր կողերուն մէջ և ետեւը կը ցանէր պէտք եղածին չափ:

4. Լոփոփ. — Ճկող մատ մը չմանելու չափ նեղ ծակերով հիւսուած տոպրակաձէւ ուռկան, խուռտ որսալու համար: Լոփոփին բերանը ունի աղեղնաձէւ փայտ մը որ կը բռնէ <sup>3</sup>/<sub>4</sub> մասը:

5. Հոփ. — Որսորդը, ամբողջ գիշերը ար- թուն կը հսկէ, և ամէն անգամին որ խուռտ- ները կողերուն մէջ գան ու իրենց խաղերը զօ- րացնեն, որսորդը վայրի չալերով կամ հաստա- տուն տուններով շինուած աւելով մը կը քշէ զանոնք Լոփոփին մէջ: Այս գործողութիւնը կը կոչուի հոփ:

6. Խրրտոց. — Յիշեալ չալերով կամ վայրի բոյսերով շինուած աւելը:

7. Խտուտ. — Ծովքի լճին ամենէն շատ արտագրած ձուկն է, որ մատի չափ երկարու- թիւն ունի ճերմակի վրայ, որուն ճիշդ նմանը ուրիշ տեղ չի գտնուիր:

ԿԻՐԻՆԴ, ԽՐԱՅԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՊԵՆ

Հոն ուր արծաթ կան չորս գետեր գեղեցիկ կեանքի, սիրոյ, և արեւու հայրենիք. Այն լեռն Ազատ որ աստղերով կը նաղի, Եւ անդունդներն սեւ ու խոր իր հիմն ունի. Որուն կողերն են միշտ պատուած բերեղէ, Ուր ոչ արծիւ կը խոյանայ, ոչ բաղէ. Լոկ կը տիրէ հոն դարաւոր լըռութիւն. Գոհարազարդ սարին վերան այդ անհուն Եւ ջինջ երկնի վերանին տակ լուսավառ լայն թեւերով կու գայ Ոգին վեհափառ: Իր հասակն է մայրիկի պէս հողմաստտ Երբ կը բանայ ճերմակ թեւերն առագաստ. Գըլուին հըպարտ կը բարձրանայ արփենի. Ճակատն անբիծ դաշտ մը ծաղկած շուշանի, Ուսէն ի վար երկայն մաղերն ամպամած կը բոլորուին կուրծքին վերայ ամփոփուած. Կամարակապ յօնքերուն մէջ կապուտակ Զոյգ արեւներ հուր կը տեղան շանթառաք. Եթէ կարգով գըլխոյն վերայ թագ ունի Կենաց փայտէն իրեն մական գալարի. Իր հինաւորաց գահաւորակն արքունի Ծըփուն կողն է Լաստափայտին առաջի:

Հրեշտակներուն մէջ ինքն էր որ առաջին Արարչագիր՝ պահան եղաւ աշխարհին. Հանգրստարանն Աստուծոյ սուրբ ոտքերուն Մեր հողն ըրաւ, անոր նախկին օրերուն. Բարձր սարէն կ'իջնէր գըրախոր բուրեան Ու կը գառնար Աստուծոյ քով միւսանգամ, Սիրով կապուած Արագածին հարազատ. Աշխարհաւոր ալիքին մէջ սանձաղատ՝ Նոյնպէս անդեկ վարելով փայտը նոյնան Անհետ ճամբով զայն կը տանէր Հայաստան. Երկընքի մէջ աղեղն ին կը պարզէր Եւ հաշտութիւնն անոր լարովը կ'երգէր, Հազար գարեր սիրտը ձեռքին, աչքը վեր Քաղցըր գէմքով տունը հայոց կ'անուշէր:

Հիմա մենակ սարը այդ նոյն ցըրտագին Լուռ կը նըստի Հայաստանի վեհ Ոգին. Ձեռքին սէջ գէմքն, արմուկը յեց տապանին.

Գոգին մէջ կայ ինկած անփոյթ գիրք մը հին. Գըլխուն վըրայ պըսակն անշուք կը շարժի, Եւ խորտակուած մականը կայ մեկուսի. Ոտքերուն տակ չորս արծուէնի գըրօշներ Վարազակնիքն, ապարօշներ, առիւծներ: Հաղիւ խոնաւ արտեւանոնք կը շարժին Զորս կողմն է սուգ և տրամուծիւն ահագին: Այրարատէն մինչեւ Ալիս, մինչեւ վերք Կ'անցնի նա միշտ արհաւիրքէ արհաւիրք. Մերթ կը նայի շահաստաններն Հայազատ՝ Դէպ՝ Արմաւիր, Տիգրանակերտ, Արտաշատ, Երուանդունի, Վարդգէսին հետ, Գառնիին Զուր կը փրնաւէ մեր Արտագերսն ու Անին. Հոն կը դիտէ աւերակներն անարեւ Խառնելով իր արցունքին հետ փոշին սեւ: Հայ ոստաններն հուսկ կը քըննէ՝ գանձով լի, Որոնք թափուր որջեր են արգ գազանի: Հեռուններն չըկայ հասնող մեղ տորմիդ Տանելու մեր երկրէն խունկերն ոսկեծիղ. Եւ ոչ գանձով աշխարհներէն կը գառնան Հին օրերու վաճառորդներն հայկազեան:... Սուգ է Սիսակ, սուգորսալից Շապիվան Լուռ են տօներն Նաւասարդի նոր տարուան. Բըլուրներէն փողն որսառնէ չի լըսուիր Եւ ոչ կ'երգեն Սեպուհ, Սուկաւ բերկրալիր: Դէպի Շատգոմ ուր մուսաները կ'ապրին Կը նայի՝ թէ ո՞ր է հէգող մեր մանկոյն: Արդ չորցած է արիւնալից Շաւարշան Ուր թաղուեցան պարսիկն ու պիղծ ատրուշանն:

Սըրտի ցաւէն, և բարկութեան զերդ յագուրդ Կը լացընէ Մասեաց խորունկ գիտերն յորդ: «Հայկ, կը կանչէ, Արամ, Տիգրան, Արտաշէս Տըրդատ, Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ ու Մով- [սէս]...»

Անպատասխան, լուռ կը մընայ արձագանգն, Անպատասխան լըռեց և սիրտը խորտակ: Ու կը հիւսէ վարսերն ոսկի՝ վարագոյր Ծածկելու գէմքն ու արցունքները տըխուր: Խոր հառաչներ չըրթներուն մէջ ծիրանի Կ'արտօսանան հեծեծանքով մը լացի: